26, նոյեմբերի 2023թ.
ք. Երևան

Երևանի քաղաքապետ
Տիգրան Ավինյանին

Հանրային հավաքի անցկացման մասին իրազեկում

Հիմք ընդունելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը, հավաքն անցկացնելուն ուղղված գործողություններ ձեռնարկելուց առաջ, տեղեկացնում եմ, որ 2023 թվականի դեկտեմբերի 4-ին, 5-ին, 6-ին, 7-ին և 8-ին ժամը 10:00-ից մինչև 22:00 մեր նախաձեռնությամբ անցկացվելու են հանրային հավաքներ:

1. Հանրային հավաքները նախատեսվում են անցկացնել Երևան քաղաքի Բաղրամյան 19 հասցեում, Ազգային ժողովի գլխավոր մուտքի դարպասների մոտ:
2. Հավաքները նախատեսվում են մեկնարկել դեկտեմբերի 4-ին, 5-ին, 6-ին, 7-ին և 8-ին ժամը 10:00-ից և ավարտել մինչև 22:00:
3. Հավաքների նպատակն է պահանջել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովից ընդունելու քաղաքացիական նախաձեռնությամբ ներկայացված «Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ինչպես նաև պահանջել Հայաստանի Հանրապետության պետականության սպառնալիք հանդիսացող պաշտոնատար անձանց հեռացումը իշխանությունից:
4. Հավաքներին նախատեսվում է մոտավորապես 5"000 մարդու մասնակցություն: Մասնակիցների մասին հնարավոր առավել ստույգ կլինի կանխատեսումներ անել հավաքից մի քանի օր առաջ՝ սպասվող հանրային արձագանքներից ելնելով:
5. Հավաքներին հնարավոր է օգտագործել ստացիոնար կամ շարժական բեմահարթակ (ավտոմեքենայի վրա հարմարեցված), բարձրախոսներ, Հայաստանի Հանրապետության և Արցախի

Հանրապետության պետական դրոշներ, հնարավոր են պաստառներ և այլն:

6. Հավաքներում կարգադրիչների մասնակցություն չի նախատեսվում:
7. Հավաքների ընթացքում հնարավոր են անցկացվի երթեր՝ Բաղրամյան պողոտա – Դեմիրճյան փողոց - Բաղրամյան պողոտա երթուղով (երթերի անցկացման ժամկետների մասին կտեղեկացվի Ոստիկանության ներկայացուցիչներին):
8. Հանրային հավաքների կազմակերպիչն ու ղեկավարն է հանդիսանում Հայաստանի Հանրապետության քաղաքացի Էդգար Ֆերդինանդի Ղազարյանը

Խնդրում ենք օպերատիվ կարգով, բջջային կապի կամ էլեկտրոնային փոստի միջոցով, տրամադրել տվյալներ Երևանի քաղաքապետարանի այն պաշտոնատար անձի մասին (անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոն, բջջային և աշխատանքային հեռախոսահամարներ, էլեկտրոնային փոսի հասցե), որի հետ հնարավոր կլինի հետագայում օպերատիվ կապ պահպանել՝ նաև «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի հոդված 14-ի 5-րդ կետով սահմանված դեպքերում:

Էդգար Ղազարյան
Հայաստանի Հանրապետության քաղաքացի